

«ՕԳՏՍՏԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Dasaxos.am»

Կիրառելով սերվիսը, որն իրենից ներկայացնում է կայք (այսուհետև՝ Կայք)՝ համացանցում հասանելի <https://dasaxos.am> բացառիկ դոմենային անվանումով, ներառելով վերջինիս բոլոր ենթադոմենները, համացանցի օգտատերն անվեհապահորեն համաձայնվում է սույն օգտատիրական համաձայնագրի հետ (այսուհետև՝ Համաձայնագիր), որը կարգավորում է Կայքի օգտագործման կանոնները: Կայքը նախատեսված է տարբեր առարկաների դասուցույցների (ուսուցիցչների) որոնման, նաև գրանցված ուսուցիչների համար ուսանողների որոնման համար: Համաձայնագիրը սահմանում է Կայքի սեփականատիրոջ՝ ՅՈՒՐԻՅ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ), ՀՎՀՀ 20241495 և գործիրավ ֆիզիկական անձի, կամ անչափահաս անձի օրինական ներկայացուցչի, կամ իրավաբանական անձի ներկայացուցչի միջև (այսուհետև անվանվելով «Օգտատեր», որն ընդունում է Համաձայնագիրը), փոխադարձ իրավունքները, պարտականությունները և փոխհարաբերությունների կարգը:

1. ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Կառավարիչ (ադմինիստրատոր) – ֆիզիկական անձ, Կայքի սեփականատիրոջ ներկայացուցիչ, որն ունի Կայքում զետեղված ցանկացած տեղեկության շտկման, օգտատերերի բողոքների վերաբերյալ որոշումների կայացման լիազորությունները: Կառավարիչն իր գործունեության մեջ ղեկավարվում է ներքին համոզմամբ և պատասխանատվություն չի կրում Կայքի օգտատերերի գործողությունների համար, ինչպես նաև չի իրականացնում Օգտատերերի կողմից առաջին անգամ հրապարակված նյութերի կամ տեղեկության նախնական ստուգում (ինչպես նաև մոդերացիա):

Կառավարչի հետ կապն իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով հետևյալ հասցեով՝ dasaxos-am@mail.ru:

1.2. Բովանդակություն – տեքստային, գրաֆիկական և այլ նյութերի ամբողջություն, որոնք պատկանում են Գործադիրին և/կամ նրա կողմից օգտագործվում են օրինական հիմքով, անհրաժեշտ են Կայքի լիարժեք գործունեության համար՝ Համաձայնագրում նշված նպատակներին համաձայն:

1.3. Դասուցույց (դասախոս) – Օգտատիրոջ տեսակ, որը գրանցված է Կայքում համապատասխան կարգավիճակով, առաջարկում է Կայքի այլ Օգտատերերին որոշակի առարկայի ուսուցման ծառայություններ:

1.4. Ուսանող - Օգտատիրոջ տեսակ, որը գրանցված է Կայքում համապատասխան կարգավիճակով, օգտագործում կամ ցանկանում է օգտվել ուսուցման Դասախոսների կողմից տրվող ծառայություններից:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Կայքի գործող խմբագրությունը միշտ հասանելի է համացանցում հետևյալ հասցեով՝ <https://dasaxos.am/hy>

2.2. Գրանցվելով Կայքում, օգտագործելով նրա գործառույթային հնարավորությունները՝ Օգտատերն ընդունում է Համաձայնագիրն իր բոլոր անբաժանելի մասերով՝ հավելվածներով՝ **«Վճարովի ծառայությունների տրամադրման հրապարակային առաջարկով», «Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությամբ»:**

2.3. Համաձայնագրի ակցեպտը նշանակում է Օգտատիրոջ կողմից բոլոր դրույթների և հավելվածների անվերապահ ընդունումը, ընդ որում, Օգտատերը հասկանում է Համաձայնագրի դրույթների էությունը և

բովանդակությունը, այդ թվում՝ իր վրա դրվող պատասխանատվությունը՝ ըստ Համաձայնագրի:

2.4. Համաձայնագրի ամբողջական կամ նրա մասի հետ անհամաձայնության դեպքում Օգտատերը պարտավորվում է անհապաղ կերպով դադարել բոլոր սարքավորումներում, համացանցի բոլոր դիտարկիչներում (բրաուզերներում) Կայքի օգտագործումը:

2.5. Գործադիրն իրավունք ունի միակողմանի կարգով Կայքէջում փոփոխել Համաձայնագրի նոր խմբագրության դրույթները: Համաձայնագրի նոր խմբագրության հրապարակումից հետո շարունակելով օգտագործել Կայքը՝ Օգտատերը համաձայնվում է Համաձայնագրում արված փոփոխությունների հետ, ընդ որում, Օգտատերը պարտավորվում է ինքնուրույն ծանոթանալ Համաձայնագրի նոր խմբագրություններին:

2.6. Գործադիրը անմիջական կերպով չի մասնակցում կրթական գործընթացին, չի իրականացնում նյութերի (դիպլոմային, կուրսային և այլ աշխատանքների) տեղադրումը, նպատակների համար չի ներգրավում կրթական հաստատություններ և կազմակերպություններ, դասախոսներ, չի ղեկավարվում պետական օրգանների կողմից մշակված չափանիշներով և մեթոդաբանություններով:

2.7. Գործադիրը միայն տրամադրում է Օգտատերերի համար տեղեկատվական տարածություն Կայքում՝ Համաձայնագրի նախաբանում նշված նպատակներին հասնելու համար: Գործադիրի գործունեությունը ոչ մի կերպ չի կարող կարգավորվել «Կրթության մասին» 8 մայիսի 1999 թվականի №3Ք-297 ՀՀ Օրենքով:

2.8. Օգտատերը հասկանում է և անվերապահորեն համաձայնվում է, որ օգտվում է ծառայություններից Համաձայնագրի շրջանակներում իր պատասխանատվությամբ, և որ ծառայությունները տրվում են Օգտատիրոջ «որպիսին որ կան» և «որպես այդպիսին հասանելի»

պայմանների հիման վրա, այն է՝ Գործադիրը չի հայտարարում և չի երաշխավորում, որ

- ծառայությունները համապատասխանելու են Օգտատիրոջ պահանջներին,
- ծառայությունները տրվելու են անդադար, ժամանակին, անվտանգ և անսխալ կերպով,
- ծառայությունների կիրառման արդյունքում Օգտատիրոջ կողմից ստացված ցանկացած տեղեկություն լինելու է ճշգրիտ և հուսալի,
- Կայքի կազմում որևէ ծրագրային ապահովման աշխատանքի կամ գործառույթային հնարավորությունների անսարքությունները շտկվելու են Օգտատիրոջ կողմից սպասված ժամկետների սահմաններում:

3. ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՅՔՈՒՄ

3.1. Գրանցումը Կայքում հնարավոր է Ուսանողի, Դասախոսի կարգավիճակներով:

3.2. Օգտատերերի ցանկացած տեսակների կարգավիճակով գրանցման համար Կայքի այցելուն պետք է Կայքում մուտքագրի՝

Անունը, կոնտակտային հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, իր ստեղծած գաղտնաբառը (այն պետք է լինի 6 նիշերի երկարությամբ և պարունակի առնվազն 6 նիշ և գոնե մեկ թվանիշ), ծանոթանալ Համաձայնագրի խմբագրություններին և դրա բոլոր հավելվածներին, դնելով համապատասխան «V» նշանը, ընտրել, թե որ կարգավիճակով է գրանցվում Օգտատերը (Դասախոս, Ուսանող)՝ սեղմելով «Գրանցվել» կոճակը:

3.3. Վերոնշյալ 3.2. կետում ներկայացված գործողությունները կատարելուց հետո Օգտատիրոջ կողմից նշված էլեկտրոնային հասցեին

հասնում է նամակ գրանցման տվյալներով՝ ID (Օգտատիրոջ նույնականացման տվյալները), էլեկտրոնային հասցեները, գաղտնաբառը և սեփական անվան ներքո Կայքում մուտք գործելու հղումը: Գրանցման հաստատման համար Օգտատիրոջն անհրաժեշտ է անցում կատարել նամակում նշված հղմամբ:

2.9. Գործադիրի հետ կապը Կայքի գործարկման հարցերով, ինչպես նաև ցանկացած այլ հարցերով՝ Համաձայնագրի՝ կողմերի պարտականությունների իրագործման հետ կապված, իրականացվում է հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ dasaxos-am@mail.ru:

3.4. Կայքում սեփական անվան ներքո հետագա մուտք գործելու համար Օգտատերը հարկավոր է մուտքագրի ավտորիզացման համար կա՛մ իր ID-ն, կա՛մ հեռախոսահամարը, կա՛մ էլեկտրոնային հասցեն, ինչպես նաև գաղտնաբառը:

3.5. Գրանցման հաստատումից հետո Օգտատերը ստանում է Կայքում իր անձնական էջը, որի միջոցով Օգտատերը հնարավորություն ունի ներբեռնելու իր մասին (Իրավաբանական անձի մասին) տեղեկությունը, կառավարելու ծառայությունները Կայքում, ստանալու ցանկացած տեղեկություն՝ Համաձայնագրի պարտականությունների իրագործման հետ կապված:

3.6. Օգտատիրոջ մասին տեղեկության, իր անձնական էջը հեռացնելու համար Օգտատերը հարկավոր է դիմի Կառավարչին համապատասխան հարցմամբ:

3.7. Անվտանգության պահպանման համար Գործադիրը խորհուրդ է տալիս էլք կատարել անձնական էջից՝ Կայքում աշխատաշրջանի ավարտից հետո սեղմելով «Ելք»/«դուրս գալ» կոճակը:

3.8. Կայքին չսանկցավորված մուտքագործման համար Օգտատերը հարկավոր է դիմի Կառավարչին համապատասխան հարցմամբ:

3.9. Օգտատերը կրում է լիարժեք պատասխանատվություն իր գաղտնաբառի անվտանգության, տվյալների պահպանվածության և երրորդ անձանց՝ իրենց մուտքանունի ու գաղտնաբառի փոխանցման համար: Գործադիրը երբեք չի խնդրում Օգտատերերին տեղեկացնել իրենց անձնական էջի գաղտնաբառը, անունը, ազգանունը և հայրանունը, բանկային քարտի համարը, անձնական հաշվեհամարը և այլ անձնական տվյալները՝ Կայքում Օգտատերին տեղեկատվական ծառայությունների տրամադրման հետ կապ չունեցող նպատակների համար:

4. ԿԱՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Օգտատերը պարտավորվում է պահպանել Համաձայնագիրն իր բոլոր անբաժանելի մասերով, ինչպես նաև գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

4.2. Կայքում գրանցվելուց հետո Ուսանողին տրվում է վճարովի ծառայություններ իրականացնել կարողացող Դասախոսների որոնման հնարավորությունը, իսկ Դասախոսներին հասանելի են դառնում Կայքի վճարովի ծառայությունները, որոնք կարգավորվում են **«Վճարովի ծառայությունների տրամադրման հրապարակային առաջարկով»:**

4.3. Օգտատերերի անձնական տվյալների մշակումն իրականացվում է **«Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությամբ»:** Անձնական տվյալների մշակումն անհրաժեշտ է Համաձայնագրի իրագործման համար, որի կողմն է հանդիսանում Օգտատերը՝ անձնական տվյալների սուբյեկտը:

4.4. Օգտատերը համաձայնվում է, որ գրանցման ընթացքում իր կողմից նշված տվյալները, ինչպես նաև Կայքի կիրառման ընթացքում իր կողմից տեղադրված տեղեկությունը կարող են հայտնվել հրապարակային հասանելիության տիրույթում, և Օգտատիրոջ կողմից Կայքում նշված

տեղեկության հետ կապված խախտումների պատասխատավության ողջ բեռը կրում է Օգտատերն անձամբ:

4.5. Օգտատիրոջն արգելվում է՝

4.5.1. Կայքում տեղադրված տեղեկատվության և այլ Օգտատերերի անձնական տեղեկատվության հավաքագրում իրականացնել, այդ թվում՝ անձնակազմի, հաճախորդների ընտրության, ռեզյումեների տեղադրման, պարտապանների որոնման նպատակների կամ նմանատիպ այլ նպատակների համար.

4.5.2. իրականացնել սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական ատելություն և թշնամանք գրգռող քարոզչություն կամ ագիտացիա, պատերոզմի, սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական և լեզվական գերակայության քարոզչություն անցկացնել.

4.5.3. Կայքում տեղադրել կամ այլ Օգտատերերին փոխանցել երրորդ անձանց սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկություն (կոնֆիդենցիալ տեղեկություն), եթե Օգտատերը չունի բավական իրավունքներ՝ օրենքի կամ պայմանագրի ուժով սահմանված, տվյալ տեղեկության հայտաբերման համար:

4.5.4. տեղադրել, վերարտադրել, լրամշակել, տարածել, հրապարակել կայքում, ընդհանուր իրազեկման հասցնել, փոխանցել, վաճառել կամ այլ կերպով օգտագործել ամբողջությամբ կամ մասամբ Բովանդակությունը առանց վերջինիս իրավատիրոջ նախնական թույլատվության.

4.5.5. Կայքում տեղադրել տեքստային հաղորդագրություններ, գրաֆիկական պատկերներ կամ այլ նյութեր, որոնց բովանդակությունը այլ Օգտատերերի կամ այլ անձանց համար վիրավորական է, ոչ ցենզուրային բառեր և արտահայտություններ, բռնություն, հակաիրավական գործունեություն, հակահասարակական, անբարոյական արարմունքներ, ինչպես նաև իրավակարգի և

բարոյականության հիմքերին հակասող ցանկացած այլ գործողություններ կատարելու կոչեր պարունակող հաղորդագրություններ.

4.5.6. Կայքում տեղադրել հաղորդագրություններ, գրաֆիկական պատկերներ կամ այլ նյութեր (այդ թվում՝ իրականությանը հակասող), որոնց տեղադրումը հասցնում է կամ կարող է վնաս հասցնել քաղաքացու պատվին, արժանապատվությանը և աշխատանքային հեղինակությանը կամ իրավաբանական անձի աշխատանքային հեղինակությանը.

4.5.7. Կայքում տեղադրել պորնոգրաֆիկական բնույթի նյութեր կամ նմանատիպ նյութեր պարունակող կայքերի հիպերտեքստային հղումներ.

4.5.8. Կայքում գրանցվել գովազդային նյութերի և այլ տեքստային հաղորդագրությունների տեղադրման նպատակով, երբ նման տեղադրումը չի համաձայնեցված Կառավարչի և/կամ չի կանոնակարգված Կայքի սեփականատիրոջ հետ կնքված այլ համաձայնագրի շրջանակներում.

4.5.9. իրականացնել առևտրային կամ այլ գովազդի կամ այլ տեսակի հաղորդագրությունների տարածում անձանց, որոնք ցանկություն չունեն դրանք ստանալ (ՄՊԱՄ).

4.5.10. իրականացնել Կայքի գործարկման ապակայունացմանն ուղղված գործողություններ, իրականացնել Կայքի կառավարման չսանկցավորված մուտք գործելու փորձեր.

4.5.11. քննարկել, քննադատել Կառավարչի, Կայքի սեփականատիրոջ գործողությունները ինչպես Կայքի էջերում, այնպես էլ կողմնակի համացանցային կայքերում, ՋԼՄ-ներում և այլն:

4.6. Գործադիրն իրավունք ունի՝

4.6.1. հայցելու Դասուցույցներից (դասախոսներից) տեղեկություն, այդ թվում՝ փաստաթղթերի պատճենները, որոնք կապված են նրանց մասնագիտական գործունեության հետ, մասնավորապես՝ աշխատանքի փորձի, կրթության մակարդակի, որակավորման, աշխատավայրի մասին վկայող փաստաթղթերը և Դասուցույցի (դասախոսի) այլ մասնագիտական տվյալները.

4.6.2. Դասուցույցի (դասախոսի) կողմից տրամադրված փաստաթղթերի, տեղեկատվության և այլ տեղեկության անհավաստիության հայտնաբերման կամ դրանց հավաստիության նկատմամբ կասկածների առաջացման դեպքում անհապաղ կերպով կանգնեցնել ծառայությունների տրամադրումը մինչև համապատասխան փաստաթղթերով հաստատված տեղեկատվության ստացումը: Այն դեպքում, երբ Դասուցույցը (դասախոսը) չի արձագանքում Գործադիրի՝ ճշգրտված տեղեկության և հաստատող փաստաթղթերի տրամադրման հայցմանը 10 (տասը) օրացույցային օրերի ընթացքում, կամ դիտավորյալ ներկայացրել է անհավաստի տեղեկատվություն և/կամ տեղեկություն, Գործադիրն իրավունք ունի արգելափակել Դասախոսի անձնական էջը և տեղադրել նրա մասին տեղեկությունը հատուկ բաժին՝ «Սև ցուցակ»:

4.6.3. Տեղադրելու Դասուցույցի (դասախոսի) ծառայությունների մասին տեղեկությունը Կայքում՝ առանց նշելու նրա կոնտակտային տվյալները:

4.6.4. Մերժելու այն տեղեկության հրապարակումը, որը Դասուցույցը (դասախոսը) չի կարող հաստատել փաստաթղթերով:

4.6.5. Խմբագրելու, համակարգելու, կրճատելու սեփական հայեցողությամբ Դասուցույցի (դասախոսի) մասին տեղեկությունը՝ Գործադիրի Կայքում տեղադրվելու համար նախատեսված:

4.6.6. Դասախոսի գործունեությունը ղեկավարելու ցանկացած հասանելի միջոցով:

4.6.7. Առանց որևէ սահմանափակումների ուղղելու տեղեկատվական, կազմակերպչական և այլ նյութեր ցանկացած կապ հաստատելու համար Դասախոսի կողմից Կայքում տրամադրված կանտակտներին:

4.7. Գրանցվելով Կայքում Օգտատերը համաձայնվում է ստանալ Կայքի էլեկտրոնային առաքումներ (ինչպես նաև գովազդային հաղորդագրություններ), և՛ Կայքում անմիջապես, և՛ գրանցման ժամանակ նշված էլեկտրոնային փոստի հասցեով: Օգտատերը կարող է ինքնուրույն կարգավորել իր էլեկտրոնային փոստում նմանատիպ առաքումների անջատման հնարավորությունը:

4.8. Օգտատերը պարտավորվում է չօգտագործել Կայքի ծրագրային մասի հանարավոր սխալները այլ Օգտատերերի նկատմամբ առավելության ձեռքբերման նպատակով: Օգտատերը պարտավորվում է տեղեկացնել Կայքում իր կողմից հայտնաբերված բոլոր սխալների մասին Կառավարչին:

4.9. Օգտատերը պատասխանատվություն է կրում իր անձնական էջի անվտանգության համար և պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել դրա անվտանգությունն ապահովող միջոցներ:

4.10. Օգտատերն ընդունում է և համաձայնվում կատարել Կառավարչի ցուցումները, որոնք կապված են Կայքի կիրարկման հետ՝ ըստ Համաձայնագրի: Եթե Օգտատերը չի կատարում այդ ցուցումները, Կառավարիչն իրավունք ունի իր հայեցողությամբ դադարեցնել կամ կանգնեցնել Օգտատիրոջ մուտքը Կայք:

4.11. Օգտատերը ճանաչում է և համաձայնվում է, որ Կառավարիչը պարտավոր չէ ստուգելու ցանկացած տեսակի տեղեկություն, որը տեղակայվում և/կամ տարածվում է Օգտատիրոջ կողմից Կայքում: Կառավարիչն իրավունք ունի, բայց ոչ պարտականություն, ինքնուրույն և առանց Օգտատիրոջն իրազեկման ընտրելու տեղեկություն՝ Կայքում հրապարակելու համար:

4.12. Կառավարիչը պատասխանատու չէ տվյալների հնարավոր կորուսման կամ վնասման, ինչպես նաև ցանկացած բնույթի հետևանքների համար, որոնք կարող են պատահել Օգտատիրոջ կողմից Համաձայնագրի խախտման դեպքում:

4.13. Օգտատերը գիտակցում է և համաձայն է առ այն, որ պետք է ինքնուրույն գնահատի բոլոր ռիսկերը՝ կապված Կայքի կիրարկման հետ՝ վերջինում տեղակայված հուսալիության, ամբողջականության և տեղեկության օգտակարության գնահատականը ներառյալ:

5. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

5.1. Անձնական էջի մուտքանվան և գաղտնաբառի կամ Օգտատիրոջ՝ Կայքում նշված էլեկտրոնային փոստի անձնական հասցեի (էլետրոնային ստորագրության բանալու) կիրառմամբ Օգտատիրոջ ցանկացած գործողություններ հաստատում են Օգտատիրոջ կողմից անմիջապես ձևավորված պարզ էլեկտրոնային ստորագրության փաստը: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի (15 հունվարի 2005 թվականի №3Ր-40) համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը տեղեկության կրիպտոգրաֆիկ փոխակերպման միջոցով ստացված և էլեկտրոնային-թվային ձևով ներկայացված սիմվոլների ունիկալ հերթականություն է էլեկտրոնային ստորագրության տվյալների ստեղծման և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի համար, որը միացված է էլեկտրոնային փաստաթղթերին՝ կամ տրամաբանորեն կապված է վերջիններիս հետ և կիրառվում է ստորագրող անձի նույնականացման համար, ինչպես նաև էլետրոնային փաստաթղթի՝ կեղծիքներից և աղավաղումներից պաշտպանության համար:

5.3. Օգտատերը պարտավորվում է պահպանել իր էլեկտրոնային ստորագրության գաղտնականությունը (չտրամադրել իր մուտքանունն ու

գաղտնաբառը կամ սեփական էլեկտրոնային փոստ մուտք գործելու հնարավորությունը երրորդ անձանց), և կրում է լիարժեք պատասխանատվություն դրա պահպանվածության և անհատական կիրառման համար՝ ինքնուրույն ընտրելով դրանց պահպանման և մուտքի սահմանափակման միջոցները:

5.6. Անձնական էջի և/կամ սեփական էլեկտրոնային փոստի մուտքանվան և գաղտնաբառի չսանկցավորված մուտքագործման դեպքում, կորստի կամ դրանք՝ երրորդ անձանց հայտաբերման դեպքում Օգտատերը պարտավոր է անհապաղ կերպով տեղեկացնել այդ ամենի մասին Կառավարչին:

6. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. Կայքի բոլոր օբյեկտները (Օգտատերերի կողմից ներբեռնված Բովանդակության բացառությամբ), այդ թվում՝ դիզայնի տարրերը, տեքստը, գրաֆիկական պատկերները, պատկերագարդումները, ԷՀՄ-ի համար ծրագրերը, տվյալների բազաները և այլ օբյեկտները հանդիսանում են Օգտատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների առարկաներ:

6.2. Մտավոր սեփականության ոչ մի օբյեկտ, ինչպես նաև ցանկացած Բովանդակություն չեն կարող օգտագործվել Համաձայնագրի խախտմամբ՝ առանց սեփականատիրոջ նախնական գրավոր թույլատվության: Օգտագործումը ենթադրում է Օգտատիրոջ բոլոր գործողությունները՝ թվարկված ՀՀ ՔՕ-ի 1104 հոդվածում, անկախ նրանից, թե կատարվում են համապատասխան գործողություններ շահույթի ձեռքբերման նպատակով կամ առանց այդ նպատակի:

6.3. Օգտատիրոջը տրամադրվում է անձնական ոչ բացառիկ և անփոխանցելի իրավունք (թույլատրված կիրառում) օգտագործելու

Կայքի ծրագրային ապահովումը իր սարքավորման վրա, այն պայմանով, որ ո՛չ Օգտատերը, ո՛չ ցանկացած այլ անձինք Օգտատիրոջ կողմի հետ համագործակցելով չեն պատճենելու կամ փոփոխելու ծրագրային ապահովումը, ստեղծելու ծրագրային ապահովման ածանցյալ ծրագրեր, ներթափանցելու ծրագրային ապահովման մեջ ծրագրերի կոդերի ձեռքբերման նպատակով, իրականացնելու վաճառք, զիջում, վարձակալում, երրորդ անձանց՝ ծրագրային ապահովման նկատմամբ ցանկացած այլ ձևով իրավունքների փոխանցում՝ ըստ Համաձայնագրի Օգտատիրոջը տրամադրված, ինչպես նաև մոդիֆիկացնելու ծառայությունները, այդ թվում՝ դրանց նկատմամբ չսանկցավորված մուտքի ձեռքբերման նպատակով:

6.4. Կայքում սեփականության օբյեկտների վերաբերյալ իրավունքների խախտման հայտնաբերման դեպքում համապատասխան իրավատերը նախադատական կարգով պարտավոր է ուղղելու էլեկտրոնային փոստով համապատասխան դիմում Կառավարչի ն: Այն դեպքում, եթե դիմումը տրվում է լիազորված անձի միջոցով դիմումին կից ներկայացվում է փաստաթղթի պատճենը (գրավոր կամ էլեկտրոնային ձևով), որը հաստատում է նրա լիազորությունները:

6.5. Կառավարչի մոտ ապացույցների առկայության դեպքում, որոնք հաստատում են Կայքում հեղինակային և (կամ) դրան հարակից իրավունքների օբյեկտներ պարունակող տեղեկության տեղադրման օրինաչափականությունը, Գործադիրն իրավունք ունի չկիրառելու նմանատիպ տեղեկության հեռացման միջոցներ օգտատիրոջ դիմումով և ուղղում է դիմորդին համապատասխան ծանուցում՝ դրան կցելով նշված ապացույցները:

6.6. Կայքում ներբեռնելով կոնտենտը (Բովանդակությունը), Օգտատերը երաշխավորում է, որ այն հրապարակելու և օգտագործման այլ տեսակների համար ունի բավարար իրավունքներ: Երրորդ անձանց՝ Գործադիրին Օգտատերի կողմից Կայքում կոնտենտի տեղադրման

փաստի վերաբերյալ դժգոհությունների ներկայացման դեպքում Օգտատերը պարտավորվում է իր ուժերով և իր հաշվին կարգավորել նմանատիպ դժգոհությունները, ինչպես նաև փոխհատուցել այդ դժգոհությունների կարգավորման հետ կապված բոլոր ծախսերը և տուգանքները:

6.7. Օգտատերը Գործադիրին տրամադրում է հրապարակման, ԷՀՄ-ի հիշուղության մեջ ձայնագրման, Համաձայնագրի պարտականությունների կատարման նպատակով Պատվիրատուին՝ Կայքի Աշխատանքների փոխանցման իրավունքը:

6.8. Օգտատերը գիտակցում է, որ Կայքի այլ Օգտատերերի մասին տեղեկությունը հանդիսանում է Գործադիրին պատկանող տվյալների բազա: Արգելվում է տվյալների բազայի, ինչպես նաև Կայքի ցանկացած այլ Բովանդակության պատճենումը, վերարտադրումը, վերահրատարակությունը, վերբեռնումը, փոխանցումը, տարածումն առանց Գործադիրի գրավոր համաձայնության:

6.9. «Dasaxos.am» բառային նշանակումը, ինչպես նաև գրաֆիկական լոգոտիպը Կայքում հանդիսանում են Գործադիրին պատկանող ապրանքային նշաններ: Նշված անհատականացման միջոցների կիրառումն առանց Գործադիրի համաձայնության արգելված է:

6.10. Կայքի տեղեկատվական նյութերի տեղադրումը կողմնակի ինտերնետային կայքերում հնարավոր է միայն նյութերի տակ Կայքի ակտիվ ինդեքսավորվող հղման տեղադրման դեպքում:

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

7.1. Օգտատերը հասկանում է և համաձայնվում է առ այն, որ Կայքի բոլոր ծառայությունները ներկայացվում են «որպիսին որ կան», և որ Գործադիրը չի կրում պատասխանատվություն որևէ ուշացման, խափանման, ոչ ճիշտ և ոչ ժամանակին առաքման, որևէ օգտատիրական

անձնական կամ այլ տեղեկության հեռացման կամ չպահպանման համար:

7.2. Օգտատերը համաձայնվում է, որ Կայքը համապատասխանում է իր պահանջներին Համաձայնագրի ընդունման պահին և համապատասխանելու է հետագայում, որ արդյունքները, որոնք կարող են ստացվել Կայքն օգտագործելիս, լինելու են ճշգրիտ և հուսալի և կարող են կիրառվել ինչ-որ նպատակների համար կամ ինչ-որ կարգավիճակում (օրինակ՝ ինչ-որ փաստերի կայացման և/կամ հաստատման համար):

7.3. Կայքի ծառայություններն ու սերվիսները կարող են պարունակել հղումներ համացանցի այլ ռեսուրսներին: Սույնով Օգտատերը համաձայնվում է, որ Գործադիրը չի կրում որևէ պատասխանատվություն այդ ռեսուրսների հասնելիության և դրանցում տեղակայված տեղեկության համար, ինչպես նաև այդ ռեսուրսների օգտագործման հետ կապված որևէ հետևանքների համար:

7.4. Ոչ մի հանգամանքներում Գործադիրը կամ նրա ներկայացուցիչները չեն կրում պատասխանատվություն Օգտատերի կամ ցանկացած երրորդ անձանց առջև որևէ անուղղակի, պատահական, ոչ միտումնավոր վնասի՝ ներառյալ բաց թողնված շահույթի կամ կորուսված տվյալների, պատվին, արժանապատվությանը և աշխատանքային հեղինկությանը հասցվող վնասի համար՝ առաջացած Կայքի, դրա պարունակության կամ այլ նյութերի կիրառման հետևանքով, որոնց մուտքը ստացել են Օգտատերը կամ այլ անձինք Կայքի միջոցով, անգամ եթե Գործադիրը զգուշացրել կամ նշել էր նմանատիպ վնասի հնարավորության մասին:

7.5. Գործադիրը չի կրում պատասխանատվություն խորհրդատվությունների, առաջարկությունների մեջ կատարված սխալների, Կայքում պատվիրված դասուսուցման արդյունքների համար:

7.6. Ցանկացած դեպքում Գործադիրի պատասխանատվությունը սահմանված է 50 000 դրամով (հիսուն հազար դրամով)՝ Հայաստանի

Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն, և վերագրվում է Գործադիրին իր գործողություններում մեղավորության առկայության դեպքում:

8. ԵԶՐԱՓՈՒՄԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Բոլոր տարածայնությունները և վեճերը, որոնք կարող են առաջանալ Համաձայնագրի կողմերի միջև պետք է լուծվեն նախադատական կարգով բանակցությունների միջոցով, բողոքի նամակների ուղարկմամբ: Բողոքի պատասխանի տրամադրման ժամկետը 10 (տասը) աշխատանքային օր է: Օգտատերի բողոքները ընդունվում և դիտվում են միայն գրավոր ձևով Գործադիրի կողմից:

8.2. Եթե որոշ պատճառներով նախադատական կարգավորման ընթացքում համաձայնություն չի կայացվում, Համաձայնությունից բխող վեճը ենթակա է դիտմանը դատական կարգով:

8.3. Համաձայնագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Օտարերկրյա Օգտատերի Համաձայնագրի ակցեպտը նշանակում է, որ Համաձայնագրի տեքստը նրան հասկանալի է և թարգմանության կարիք նա չունի: Անհրաժեշտության դեպքում օտարերկրյա կոնտրագենտները պարտավորվում են իրականացնել անհրաժեշտ լեզվով այդպիսի թարգմանություն իրենց սիմվոլներով և իրենց հաշվին:

Համաձայնագրի անբաժանելի մասերն են՝ 1) «Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը», 2) «Վճարովի ծառայությունների տրամադրման հրապարակային առաջարկը»:

